«ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑ» ՁԵՌՆԱՐԿԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հին ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «Վորլդ Վիժն Հայաստան» քրիստոնեական բարեգործական կազմակերպության համատեղ հրատարակած «Պատանիների աստվածաշնչային դասընթաց» ձեռնարկի շնորհանդեսը: Ձեռնարկը հրատարակության են պատրաստել Տ. Դարույր քահանա Ավետիսյանը և Տ. Ղևոնդ քահանա Մայիլյանը: «Պատանիների աստվածաշնչային դասընթաց» շարքը նախատեսված է կիրակնօրյա դպրոց հաճախող տարբեր տարիքի պատանիների համար, յուրաքանչյուր ձեռնարկն ընդգրկում է 36 դաս:

Հանդիսությանը ողջույնի խոսք ասաց Հայ Առաքելական Եկեղեցու ՔԴԿ տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: Հայր Սուրբը ներկայացրեց ՔԴԿ գործունեությունը՝ մասնավորապես շեշտելով քրիստոնեական դաստիարակությանը միտված ծրագրերը: Հայր Վարդանը խիստ կարևորեց նաև Ս. Գիրքը մանուկների և պատանիների համար մատչելի և հետաքրքրական դարձնող շարքի հրատարակությունը և շնորհակալություն հայտնեց «Վորլդ Վիժն» կազմակերպությանը համագործակցության համար:

Ապա «Վորլդ Վիժն»-ի Եկեղեցու և կառավարության հետ կապերի բաժնի ղեկավար Կարինե Հարությունյանը, «Պատանիների աստվածաշնչային դասընթաց» ծրագրի տարածաշրջանային ղեկավար Ջիմ Մորգենրոթը և Տ. Դարույր քահանա Ավետիսյանը ներկայացրեցին դասագրքերի պատմությունը, դրանց ուսուցման մեթոդաբանությունը և հեռանկարները: Այնուհետև «Վորլդ Վիժն»-ի տնօրեն Մարկ Քելլին իր երախտագիտությունը հայտնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ վերոնշյալ ծրագրին բերած մեծ և անգնահատելի օժանդակության համար: Հանդիսության վերջում գնահատանքի խոսք ասաց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը:

Շնորհանդեսին ներկա էին Մայր Աթոռի պաշտոնեության, ձեռնարկի հայերեն հրատարակության հեղինակները, Կրթության և գիտության ու Մշակույթի նախարարությունների, Կրթության Ազգային ինստիտուտի ներկայացուցիչներ, «Վորլդ Վիժն» Հայաստան քրիստոնեական բարեգործական կազմակերպության աշխատակիցները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ